

խելագարութեան համեմատական թիւը մեծացել է 50%-ով աւելի արագ, քան թէ երկրի ազգաբնակչութիւնը: Սակայն կան պնդողներ, իբր թէ այս թւի մեծանալը առաջ է եկել պարզապէս նրանից, որ այժմ այդպիսի հիւանդներին աւելի խնամքով են ցուցակագրում, որ դրանցից տներում մնում են աւելի քչերը, դրանց մասին աւելի են հոգ տանում, քան թէ առաջ, և որ դրանք աւելի երկար են ապրում: Բայց չէ՞ որ այս սոսկ մի ենթադրութիւն է, և այն էլ քիչ հաւանական ենթադրութիւն, որովհետև ամենքն էլ լաւ գիտեն, որ մեր պոռոնգէպոռնգ լցուած խելառանոցներում անհնարին է հիւանդներին պատշաճաւոր կերպով բժշկել, իսկ դիւաւոր-վիճակագրապետի տեղեկութիւններից երևում է, որ այդ ապաստարաններում մահացութիւնը աւելի արագ է աճում, քան թէ խելագարների ընդհանուր թիւը. (7 տարուայ ընթացքում, 1888-ից մինչև 1895-ը, մահացութիւնը աճել է 25%): Չամբերի հանրագիտական բառարանի մէջ էլ հեղինակը միևնոյն եզրակացութեանն է գալիս: Նա ասում է, որ եթէ վերցընելու լինենք խելագարութեան նոր դէպքերը, որ ամեն տարի ցուցակագրում են, կը գտնենք, որ վերջին 30 տարիների ընթացքում 10,000 մարդու միջից նոր խելագարողների թիւը մեծացել է 4,5-ից մինչև 6-ը (կամ 450-ից մինչև 600-ը մէկ միլիոնի միջից): Իսկ այս նշանակում է, որ խելագարների թիւը 30%-ով աւելի արագ էր շատանում, քան թէ շատանում էր ամբողջ ազգաբնակչութիւնը, ուստի՝ պիտի իբրև անվիճելի ճշմարտութիւն ընդունենք, որ խելագարութիւնը մեր մէջ աւելի յաճախակի երևոյթ է դարձել:

Խելագարութեան հետ սերտ կապ ունի ինքնասպանութիւնը, որը կասկած չը կայ՝ նոյնպէս սաստկացել է, ինչպէս ցոյց է տալիս՝ դիւաւոր վիճակագրապետի հաշիւներից քաղած հետևեալ տախտակը:

Թւական- ներ	Ինքնասպանու- թեան դէպքե- րը՝ միլիոն բնակիչների միջից	Թւական- ներ	Ինքնասպանու- թեան դէպքե- րը՝ միլիոն բը- նակիչների մի- ջից
1866—70 . . .	66,4	1881—85 . . .	73,8
1871—75 . . .	66,0	1886—90 . . .	79,4
1876—80 . . .	73,6	1891—95 . . .	88,6

Դ-ը Ստրահանը իր «Ինքնասպանութիւնն ու խելագարու-
թիւնը» աշխատութեան մէջ պնդում է, որ ինքնասպանութիւն-

ների շատանախն ու քչանալը որոշ չափով կապ ունի սպասար- նակութեան բարբութեան հետ», և որ մայր ցամաքի հեղի- նակներից շատերը սպազացուցել են, որ «ինքնասպանութիւնից առաջացած մահացութիւնը աճում է և սպակասում է հայի գնի փոփոխութեան հետ»: Առաջին միտքը անպայման հշմա- րիտ է, իսկ վերջինը բոլորովին սխալ: Վերեւ տախտակի մէջ բերած ամբողջ ժամանակամիջոցում ցարենի գինը 50 շիլ. 9 պենսից 1859—66 թ. թ. բնկել է մինչև 32 շիլ. 10 պենս 1889—91 թ. թ.: Հայի գինը մեծ նշանակութիւն չ'ունի, եթէ կեանքի պայմանները այնպէս են, որ մարդիկ բոլորովին մի- ջոցներ չ'ունեն տակաւ. բան գնելու: Խեղադրութիւնն ու ինքնասպանութիւնը նշանաւոր կերպով չքաւորութեան կամ չքաւորութիւնից ունեցած երկիւզի արդիւնքն է, որպէս ցոյց են տալիս ստատիստիկան քննութիւնների տարեկան հաշիւ- ները:

Մի ուրիշ սպաշոյց, որ ժողովրդի առողջութիւնը վատա- ցել է կեանքի անկանոն և փնասակար պայմաններից, որոնց մէջ ապրում են միլիոնաւոր մարդիկ, տալիս է այն հանգա- մանքը, որ վերջին 35 տարիների ընթացքում անբնդհատ շա- տացել են թէ վաղաժամ ծննդարեւութիւնները և թէ կենդանի մնացած երեխաների մարմնական թերութիւնները: Ներքե բերած տախտակը ցոյց է տալիս վաղաժամ ծնուածները և մար- մընական պակասութիւն ունեցողների թիւը 1,000 ծնունդների հետ համեմատած և վերջբուած է գլխաւոր-վիճակազրապետի 58-րդ տարեկան հաշիւից:

Թւականներ	Վաղաժամ ծնուածներ	Մարմնական թերութիւն ու- նեցողներ
1861—65	11,19	1,76
1866—70	11,50	1,84
1871—75	12,60	1,85
1876—80	13,38	2,39
1881—85	14,18	3,23
1886—90	16,15	3,39
1891—95	18,42	3,87

Այս տախտակի ամենաչարագուշակ գծերն են նախ՝ թը- ւերի անընդհատ մեծանալը, որը մի սպաշոյց է թէ մի մշտա- կան և շարունակ սաստկացող պատճառ է ներգործում, և ա- պա՝ թւերի աւելի արագ մեծանալը այդ ժամանակամիջոցի

վերջին կէտում, որը նոյնպէս ապացոյց է, որ պայմանները հետըհետէ աւելի և աւելի վատանում են:

Սովորաբար կարծում են, որ արբեցողութիւնը մեզ մօտ նշանաւոր կերպով պակասել է, և այս բանը անկասկած ճշմարիտ է, եթէ համեմատելու լինենք ներկայ դարի առաջին ժամանակների հետ: Բայց եթէ առնելու լինենք սովորութիւն դարձած արբեցողութիւնը, որը մահով է վերջանում, գլխաւոր-վիճակագրապէս հաշիւները ցոյց են տալիս մեզ, որ վերջին երեսուն տարիների ընթացքում արբեցողութիւնը իսկապէս սաստկացել է հետեւեալ կերպով.

Թւական- ներ	Տղամար- դիկ	Կանայք	Մահացութիւնը ար- բեցողութիւնից և սպիտակ շերմախտից՝ մէկ միլլիոն մարդը- կանց միջից
1861 - 65	—	—	41,6
1866—70	—	—	35,4
1871—75	—	—	37,6
1876—80	60,1	24	42,2
1881—85	66,6	31	48,0
1886—90	73,6	39,2	55,4
1891—95	86,6	50,2	68,2

Այստեղ մենք տեսնում ենք, որ թւերի մեծանալը մի փոքր աւելի ուշ է սկսւում, բայց դրա փոխարէն այդ չարիքը վերջին 15 տարիների ընթացքում սաստկացող արագութեամբ է զարգանում: Վերջին 20 տարիների համար տղամարդկանց և կանանց մահացութիւնը առանձին-առանձին ենք ցոյց տուել և տեսնում ենք, որ արբեցողութիւնից առաջացած մահացութիւնը կանանց մէջ չափացանց արագ է աճում: Մինչդեռ տղամարդկանց մահացութիւնը քսան տարուայ մէջ գրեթէ 50% է աւելացել, կանանց մահացութիւնը աւելացել է աւելի քան 100%: Ալկոհոլեան թունաւորում առաջացնող պատճառները բազմատեսակ են, բայց ոչ ոք չի հերքի, որ վերև բերուած իրողութիւնները ցոյց են տալիս, թէ մեր հասարակական կեանքի պայմանների մէջ կան լուրջ պակասութիւններ և որ չարիքը օրէցօր արագ զարգանում է:

Բացի վերև բերուած նշաններից, կայ այլևս մէկ նշան մեր հասարակութեան բարոյական անկման: Նրանք, որոնք

ընդհանուր, ազգային կրթութիւնն են պահանջում, ի միջի այլ պատճառաբանութիւնների բերում են և այն, իբր թէ կրթութիւնը անշուշտ պակասեցնում է սճիրների թիւը Բայց չեք բերա Սպենսերը ասում է, որ մի այդպիսի երեւոյթ կրթութիւնը չէ կարող ասաջայնել, որ մտքի զարգացումը չէ կարող պրեէ ազդեցութիւն ունենալ սճիրների թիւի վրայ, թէև կարող է ազդել այս սճիրների բնատրութեան վրայ: Թւում է ինձ, թէ Սպենսերը իրաւացի է: Շնորհիւ այն հանգամանքի, որ արդէն փոխուել են սճրագործների գասակարգութիւնը, պատիժների տեսակները, քրէական օրէնքներն ու գասավարութեան եղանակը, իհարկէ՝ գմուար չէ այնպիսի թւեր սասնալ, որոնք ցոյց են տալիս, իբր թէ սճրագործութիւնը պակասել է: աջդպէս են անում կասավարութեան պաշտօնեաները, որոնք չեն կամենում այն փաստն ընդունել, որ մեր պատճախը սխտեմը ոչ սքի չէ ուղղում: Բայց մի պարտն, որը իր ամբողջ կեանքում մօտիկ է կանգնած եղել բանտերին և բանտարկեալներին և լրջօրէն ուսումնասիրել է այս հարցը իր ամբողջութեամբ, ուրիշ եզրակացութիւնների է գալիս:

Վանդալութի բանտի քահանայ Մորրիսոնը ասում է, թէ ուշի ուշով ուսումնասիրելով վերջին երեսուն տարիների վիճակագրական տեղեկութիւնները և ուղղելով այդ թիւը՝ բանտային կեանքի մէջ արուած վերոյիշեալ փոփոխութիւնների համեմատ,— պէտք է բոլորովին ապացուցուած համարել այն միտքը, թէ սճիրները աւելացել են և այն էլ՝ աւելի արագ, քան թէ աւելացել է ազգաբնակչութիւնը նոյն ժամանակամիջոցում: Այս եզրակացութիւնը նա համարում է այնքան համաձայն ճշմարտութեանը, որքան այդ թիւը է տալիս բանտային և քրէական վիճակագրութիւնը: Նրա հետազօտութիւնների արդիւնքն է հետեւեալ տախտակը.

Թւականներ	Բանտերի բնակիչներ	Ուղղիչ ապաստաններում և արհեստանոցներում	
		Ուղղիչ ապաստաններում և արհեստանոցներում	Ընդամենը
1860—69 127,690	6,834	134,524
1870—79 154,145	17,394	171,539
1880—89 170,827	25,505	196,332

Այստեղ տեսնում ենք, որ համեմատելով առաջին և վերջին տասնամակները՝ ունենք մօտ 47%—ի յաւելում, մինչդեռ քսան տարուայ ընթացքում, 1365—ից մինչև 1884 թ., ազգա-

քնակութիւնը աճել է 30%-ից մի փոքր պակաս: Հեղինակը այս երևոյթը վերագրում է մեր մեծ քաղաքների ազգաբնակչութեան անընդհատ շատանալուն, որի շնորհիւ մի տեղ են հաւաքուում թէ՛ ոճրագործները և թէ՛ նրանց զոհերը, իսկ այդ համախմբումն և ոճիր գործելու յարմարութիւնն ու հեշտութիւնը բազմացնում են ոճրագործների թիւը: Այս պատճառների վրայ պէտք է աւելացնել գոյութեան կուրի հետզհետէ սաստկացող դժուարութիւնն ու մեր անգութ, անբարոյականացնող բանտային սիստեմը, և այն ժամանակ պարզ կը լինի, որ այս ամեն հանգամանքների մէջ ուզղակի անհնարին է, որ մէկ անգամ պատահմամբ ոճիր գործածը երբևէ մի կտոր հաց աշխատէ ազնիւ վաստակով:

Վերջացնելով այս համառօտ նկարագրութիւնը, որի մէջ փորձեցի ցոյց տալ գոյութեան կուրի և հարստութեան անխուսափելի հետևանքները ժամանակակից ընկերական պայմանների մէջ, առանձին ուշագրութիւն եմ դարձնում այն իրողութեան վրայ, որ այս բոլոր ապարախտ երևոյթները առաջ են գալիս մօտաւորապէս միևնոյն պատճառներից: Սոսկալի աղքատութեան և չքաւորութեան սաստկանալը ակներև է: Ակներև է նոյնպէս, որ այդ աղքատութիւնն ու չքաւորութիւնը աւելի արագ է աճում, քան թէ ազգաբնակչութիւնը: Բայց երբ միևնոյն ժամանակ տեսնում ենք, որ այդ երևոյթի հետ միաժամանակ և զուգընթացաբար շատանում են խելագարութիւնները, ինքնասպանութիւնները, արբեցողութիւնից առաջացած մահուան դէպքերը, վաղաժամ ծննդաբերութիւնները, բընական մարմնական թերութիւնները և ոճրագործութիւնները,—այն ժամանակ անկարելի է այս երկու երևոյթներից մէկը—աղքատութիւնը՝ չը համարել միևսի—այդ բոլոր չարիքների պատճառ, որովհետև այդչափ բազմաթիւ, բոլորովին տարբեր փաստերի պատահական զուգադիպութիւնը վերին աստիճանի անհաւանական է:

Բայց վերև բերուած փաստերից և տախտակներից կարելի մի ուրիշ եզրափակութիւն էլ անել: Եթէ մենք աչքի անցնենք հասարակական հիմնարկութիւնների (պապատանների, հիւանդանոցների, բանտերի և այլն) մէջ տեղի ունեցած մահուան դէպքերի տախտակը, կը տեսնենք, որ այդ մահացութիւնը ոչ միայն շարունակ աւելանում է ամեն հինգամեակում, այլև վերջին տարիներս աւելի արագ է մեծանում, քան թէ առաջ: Բաժանելով այդ ժամանակաշրջանը երկու հաւասար մասերի, կը գտնենք, որ դրա առաջին կէսում մահացութիւնը մեծացել է 21%-ով կամ միևնոյն է՝ թէ մէկ հինգերորդականով, մինչդեռ

Երկրորդ կէտում մեծացել է 26⁰/₆-ով կամ աւելի քան մէկ քա-
նորդով: Իսկ ինքնասպանութիւնների, վաղաժամ ծննդաբերու-
թիւնների, բնական թերութիւնների և հարբեցողութիւնից ա-
ռաջացած մահերի տախտակները ցոյց են տալիս նոյնպէս, որ
մահացութիւնը աւելի արագ է մեծանում նոյն ժամանակաշրջ-
անի երկրորդ կէտում: Այս բանից տեսել եւ կրեւում է, որ
Երկրորդ տեսակ երեոյթները կախում ունեն ասաջին տեսակ
երեոյթներից (ազգատութիւնից):

Մեծ-Բրիտանիայի ազգաբնակչութեան նիւթական անկու-
մը տարացուցում է նոյնպէս անհատական հարստութեան շա-
տանալովը: Պետական եկամուտների հաշիւից կրեւում է, որ այդ
հարստութիւնը հեռանալ աւելացել է երեք յաջորդական տասնե-
հինգամեակներում հետեւեալ կերպով.

Թւականեր	Պետական եկամուտում աւելու- նալը տոկոսներով
1850—65	64,6
1865—80	68,6
1881—96	82,4

Այս թւերը վերաբերում են Անգլիային և Իրլանդիային
և համապատասխանում են Լոնդոնի Սիւտի (Միջնաթաղի) տա-
րեկան շրջանառութեան աւելանալուն, որը, ինչպէս վերև յի-
շեցինք, City Press թերթի աշխատակիցներից մէկը համարում
է մեր «տեւորական ասաջադիմութեան» նշան:

Այստեղ ուղղակի հաստատում է, որ «աղքատութիւնը
մեծանում է հարստութեան մեծանալովը», այն սկզբունքը, որը
Հենրի Ջորջը իր «Առաջադիմութիւնն ու աղքատութիւնը»
գրքի մէջ ժամանակակից ընկերական սխտանի հիմքն է ընդու-
նում և որը այնպէս կատարի կերպով բաց էր ասւում, որպէս
մի վերին աստիճանի անհիմն և ճշմարտութեանը հակասող
միտք: Այդ երկու հակադիր երեոյթների կապը պարզ ապա-
ցուցւում է վերև բերուած փաստերով և թւերով, իսկ որ այդ
կապը պատահական չէ, կրեւում է նրանից, որ թէ աղքատու-
թիւնը և թէ հարստութիւնը ոչ միայն միաժամանակ զուգըն-
թացաբար աւելանում են, այլև աւելանում են միատեսակ
արագութեամբ, և ապա նրանից, որ ժողովրդական անկման
չորս ուրիշ նշաններն էլ—ինքնասպանութիւնը, վաղաժամ ծը-
ննդաբերութիւնը, մարմնական թերութիւններն ու արբեցո-
ղութիւնից առաջացած մահը,—որոնք առաջ են գալիս կամ աղ-

քատութիւնից կամ աղքատութեան երկիւղից և կամ հարստութեան անհաստատ և փոփոխական լինելուց՝ նոյնպէս աւելանում են նոյն ուղղութեամբ և արագութեամբ:

Արդէն տեսանք, որ Հեկսլիի կարծիքով, բոլոր նկարագրուած սարսափելի ընկերական չարիքները ժամանակակից «հասարակութեան կազմակերպութեան» պտուղներ են: Հանդուցեալ պրոֆ. Կէրնսը նոյն կարծիքի էր. Ֆրեդերիկ Հարրիսոնը դեռ 1886 թ. ասում էր, որ հարստութեան իսկական արտադրիչների կացութիւնը իր օրով մի նախատինք էր ժամանակակից հասարակութեան համար.— բայց չէ՞ որ այնուհետև այդ կացութիւնը աւելի ևս վատթարացել է և մեր բոլոր մեծ իմաստասէրներից ու բանաստեղծներից շարունակ դատապարտուել է: Պատմաբան Կարլէյլը բարձրաձայն բողոքում էր հասարակութեան անարդարութեան դէմ, թէև այնուամենայնիւ որոշակի մատնացոյց չէր անում, թէ ի՞նչ միջոցներով կարելի է այդ կազմակերպութիւնն ուղղել: Փիլիսոփայ Ռեուկինն աւելի պարզ հասկանում էր, որ անհրաժեշտ են արմատական փոփոխութիւններ մեր հասարակութեան մէջ և որոշակի ու իմ կարծիքով՝ ճիշտ ցոյց էր տալիս, թէ որո՞նք պէտք է լինեն առաջին քայլերը այդ ուղղութեամբ: Բանաստեղծ Տեննիսոնը հարցնում է.

«Լաւ է արդեօք, որ կանգնած ենք Գիտութեան բարձունքի վրայ՝ Դարերի փառքով սքօղուած,
Իսկ քաղաքացիների սիրտն ու միտքը թթւում, բորբոսնում են քաղաքների տղմի մէջ»:

Ջոն Ստիւարտ Միլը վաղուց նախազգուշացնում էր, որ երբ գործ ունենք մեծամեծ չարիքների հետ, փոքրիկ միջոցները գոնէ փոքրիկ հետևանքներ առաջացնելու փոխարէն՝ բոլորովին ոչ մի ներգործութիւն չեն ունենում: Նոյնն ասում է Լովինը իր գեղեցիկ ոտնաւորներից մէկի մէջ.

«Նոր պարագաները նոր պարտականութիւններ են ծնեցնում.— ժամանակը պակասաւոր է դարձնում հին բարիքը: Ով կամենում է ճշմարտութեան հետ ընթանալ, պէտք է անդադար առաջ դիմէ: Տես, առջևներս փայլում են նրա խարոյկները. մենք պէտք է լինենք նրա ուխտաւորները: Ի՛հն, առագաստաւորենք մեր շոգեհաւը և շտապենք դէպ առաջ, ձմրան ծովի կատաղի ալիքներով: Չէ կարելի Ապագայի դռները բանալ Անցեալի արիւնաթաթախ բանալիներով»:

Իսկ մենք միայն հէնց սրանով էինք զբաղուած մի ամբողջ դար— սպեղանիի կարկատաններ էինք դնում մեր աչքի առջև բացուող հասարակական վէրքերի վրայ: Այդ է պատճառը, որ՝ հէնց որ ազատոււմ էինք մէկ հիւանդութեան նշաններից, ար-

դէն նոր հիւանդութիւնն էր երեսն գոյլս, կամ հինը բացուած էր մի ուրիշ սակ աւելի վատթար կողմերով: Իրերի այս զբ-
բութիւնը պիտի համարուի ասանկիններոց հարիւրամակիս
ամենազարհուրելի և բուրբովին անմեկնելի թերութիւններէց
մէկը: Ինչո՞վ բացատրենք, որ այս գործի վերջերում մեր երկու
քաղաքական կուսակցութիւններին պատկանող օրէնսդիրներն
ու պետական գործիչները, թէ սոցատամիտները և թէ սոսոցա-
նոցականները, որոնք հերթով կատաւարում էին մեր երկիրը,
ոչ մի կերպ չեն ուղեցել խոտտովանուել, որ կարող է որեւէ
խակական չարիք ստաջանալ հարստութեան բաշխման ժամա-
նակակից եղանակներէց: Մեր կատաւարող շրջանները ոչ մի
էական ճար չը հնարեցին, ոչ մի արմատական միջոց ձեռք չառան:
Նրանք շարունակ զրազուած են եղել՝ առանձին-առանձին ու-
սումնասիրելով բանուր գատակարգը մաշոյ ամեն մի չարիք,
և այսօր էլ չեն գաղաբում չնչին զեղեր գրելուց, որոնք եր-
բէք չեն բարելաւել, երբէք չեն էլ կարող բարելաւել ամբողջ
ժողովրդի կացութիւնը: Նրանք մինչև այժմ էլ հաւատում են,
թէ սպազայ բարօրութեան դաները կարելի է բանալ «վնցեա-
լի արխանթաթախ բանալիներով»):

XXI

ՆԵՐՍԻ ՀԵՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՂՈՎՏՈՒՄԸ:— ԵԶՐԵՓԵԿՈՒԹԻՒՆ

Հարստութեանը տիրանալու ձգտումը և այս ձգտման
տիրալի հետևանքները, որպէս ցոյց տուինք նախորդ գլխի
մէջ, առաջացրել է բնական մթերքների թեթևամիտ յափշտա-
կութիւն—մի չարիք, որը աւելի ևս տիրալի է, որովհետև ա-
ւելի ևս անուղղելի է: Ներկայումս ոչ միայն անհետացել են
աշխարհիս երեսից այն վիթխարի անտառները, որոնց բնու-
թիւնը բուսցրել էր հարիւրաւոր տարիների ընթացքում, այլև
երկիրս բոլոր հանքային դանձերը, որոնք անչափ երկարատև
ժամանակամիջոցների և երկրաբանական փոփոխութիւնների
դանդաղ դործ են, արդէն սպառուել են կամ դեռևս սպառում

*) Սովոր չեմ գատապարտել որեւէ չարիք և միևնոյն ժամանակ ոչ մի
ճար ցոյց չը տալ նրա դէմ: Բայց ներկայ աշխատութեան մէջ իմ զծագրած
շրջանակից զուրս եկած կը լինէի, եթէ այստեղ մանրամասնաբար սկսէի խօ-
սել այս հարցի մասին: Ընդամեննայնիս այս առիթով մի քանի առաջարկու-
թիւններ և ցուցմունքներ եմ անում ներկայ զբքիս «Յետ-զբութեան» գլխի մէջ:

են այնպիսի ծաւալով, որպիսի ծաւալով երբէք չեն սպառուել մարդկային պատմութեան բոլոր նախորդ շրջաններում:

Անգլիայում՝ ամեն տարի արտասահման հանուող քարածուխի արժէքը մեծացել է 3-ից մինչև 16 միլլիոն ֆունտ ստերլինգ, իսկ արտահանուող քարածուխի քանակութիւնը այժմ հասել է մօտ 2 միլլիարդ փութի: Առաջին անհրաժեշտ պիտոյքներից մէկի այս անընդհատ սպառումը օգուտ է բերում ամբողջովին խոշոր հանքատէրերին և դրամատէրերին, մինչդեռ մեր ժողովրդի միլլիոնաւոր մարդիկ ապրում են ետին չքաւորութեան մէջ, զրկուած են կեանքի ամենահասարակ յարմարութիւններից, և նոյնիսկ շատերը մեռնում են այն կենսատուտ տաքութեան պակասութիւնից, որ կարող է տալ քարածուխը: Քարածուխի մի ահազին քանակութիւն գործ է ածւում նոյնպէս արտահանուող երկաթի արդիւնաբերութեան մէջ. ամեն տարի այս բանի համար գործ է ածւում մօտ 120 միլլիոն փութ: Եթէ հասարակութիւնը խելացի կազմակերպութիւն ունենար, նախ և առաջ հող կը տարուէր, որ երկրի բոլոր ընտանիքները ունենային բաւականաչափ քարածուխ, և այնուհետև միայն թոյլ կը տրուէր մնացորդը արտահանել, իսկ եթէ մեր հասարակական կազմակերպութիւնը այժմեանից աւելի բարոյական լինէր, երկու դիտողութիւն բաւական կը լինէր, որպէսզի բոլորովին արգելուէր այդ մթերքի արտահանութիւնը: Առաջին դիտողութիւնն այն է, որ մենք լուրջ պարտականութիւններ ունենք ապագայ սերունդների առաջ և ոչ մի իրաւունք չ'ունենք առանց ծայրայեղ անհրաժեշտութեան պակասեցնելու բնութեան այն մթերքները, որ ինքներս չենք կարող վերարտադրել. երկրորդ դիտողութիւնն այն է, որ քարածուխի և երկաթի արդիւնագործութիւնները, որոնք մանաւանդ զժուար և անախորժ են բանւորների համար և փչացընում են արգաւանդ հողի մեծ-մեծ տարածութիւններ ու նրսեմացնում են բնութեան գեղեցկութիւնները,—պէտք է սահմանափակուեն միայն այնքանով, որքան անպայման անհրաժեշտ է մեր երկրի սեփական պէտքերի համար:

Ամերիկայում և մի քանի այլ երկիրներում նոյնպէս անօգուտ և անխնայ կերպով վատնւում է նաւթն ու բնական գազը, որից ահազին հարստութիւններ են դիզում մասնաւոր անհատները, մինչդեռ ամբողջ ժողովրդի դրութիւնը չէ բարեփոխւում նկատելի կերպով: Ոսք չը կայ, հրաշալի բան է նաւթի լուսաւորութիւնը, բայց այդ՝ արդէն յարմարութիւն է, կոմֆորտ է, ոչ թէ անհրաժեշտութիւն, պէտք, և երկրորդական բան կը մնայ, մինչև որ ամենքն էլ չեն ունենայ բաւա-

կանաչափ կերակուր, հազուա, սաքաթիւն, բնակարան, մաքուր ջուր և օդ, այսինքն՝ այն ամենը, ինչ որ կազմում է կեանքի անողայման անհրաժեշտութիւն և ինչ որ ժամանակակից քաղաքակրթութեան, — աւելի ճիշտ՝ ժամանակակից բարբարոսութեան պայմանները մէջ միլլիոնաւոր անմեղ մարդիկ չեն կարող ստանալ: Այս գէպքում մենք, գոլիթները և փարբսեցիների պէս, սասանորդ ենք սալխ անանուխից և չամանից, իսկ օրէնքի էտիկան պատւերները արեամարնում ենք:

Շատ տեսակէտներով նոյնչափ կորստարեր է և «ոսկէ տնկը», որ տարածուած է Կալիֆորնիայում, Աւստրալիայում, Հարաւային Աֆրիկայում և ուրիշ երկիրներում, ուր ոսկին առատ է: Այստեղ սառջ կիսն, թէև այլ ճանապարհներով, ոչ պակաս ֆաստակար երեւոյթներ, քան թէ իսպանացոց օրով Մեքսիկայում և Պերուում չորս հարիւր տարի մեղնից առաջ: Արագ-արագ գիւղում են անաղին հարստութիւններ, արագ շատանում է աղպանակութիւնը, բայց զբա հետ միաժամանակ բուսնում են և մեծ քաղաքները, անխուսափելի չքաւորութիւնով, արտաներով, նեղուածքութիւնով և նոյն տեսակ սովածութիւնով, ինչ որ նկատուած է Հին Աշխարհի երկիրներում: Որպէս և ամեն տեղ, այստեղ էլ այդ ոսկեմոլութիւնը փչացնում է գետինը և բնութեան գեղեցկութիւնները, ծածկելով երկրի մակերևոյթը հանքի անպէտք մնացորդների կոյսերով, հեղեղելով արգաւանդ ցածրահարթութիւնները՝ ոսկու լուսնալուց մնացած կեղտոտ ջրերով: ոսկեհան աղպանակութեան շատանալովը՝ աւելի շատ մտեղէն կերակրի պահանջ է առաջանում. մինչդեռ Կալիֆորնիայում, Աւստրալիայում և Հարաւային Աֆրիկայում բնական արօտատեղիները ոչնչանում են, և յաճախ նրանց փոխարինում են՝ աղբակոյտերով և ագեղ ու անասունների կերի համար անպէտք բոյսերով ծածկուած տարածութիւնները:

Յայտնի է նոյնպէս, որ ոսկի փնտրողների միատեղ հաւաքուելը առաջացրել է անաղին հասարակական չարիք, ամեն տեսակ յանցանքների զուռը լայն բանալով և զարգացնելով արբեցողութիւն, թղթամոլութիւն և մարդասպանութիւն երբէք չը տեսնուած չափերով: Որպէս առաջ, երբ առանձին անհատները ոսկի էին ստանում լուանալով ոսկերեք աւազը, նոյնպէս և այժմ, երբ մեծ ընկերութիւնները հանում են ոսկին կվարցային ամուր շերտերից, — այս պարապմունքը մի մոլի խաղ է կամ սպեկուլացիա. մինչդեռ մի քանիսը արագ հարբստանում են, միւսները բոլորովին քանդուած, մնանկանում են, իսկ այս միայն աւելի է բորբոքում խաղի մոլութիւնը և աւե-

լի է թուլացնում կամ անդուր դարձնում ուրիշ պարագմունքները, որոնցով իսկական հարստութիւնն է ձեռք բերուած հանգիստ, տոկուն և հաշիւների վրայ հիմնուած աշխատանքի օգնութեամբ: Երբէք չը պէտք է մոռանալ, որ ոսկի փնտրելու և և հանելու վրայ գործադրուած ահագին մարդկային աշխատանքը,—բոլոր այդ շոգեհասերը, որոնք հազարաւոր հետախոյզներ, հանքահաններ և մոլի դրամատէրեր են տեղափոխուած և այդ մարդկանց գործածած մեքենաները, գործիքները և ամեն տեսակ պիտոյքներն են փոխադրուած, նրանց տները, կերակուրը, հագուստը, ամեն տեսակ խմիչքների անթիւ անհամար տակաւները,—այս ամենը, հասարակութեան իսկական բարօրութեան տեսակէտից, անպայման կերպով անօգուտ կորած աշխատանք է: Ոսկին հարստութիւնն չէ. նա կեանքի առաջին անհրաժեշտ պիտոյքներից մէկը չէ, նոյնիսկ կեանքի փարթամութեան իր չէ բառի բուն նշանակութեամբ: Նա երկու հպատակների է ծառայում. նախ՝ նա անհրաժեշտ ապրանքների փոխանակութեան միջնորդ իր է և ապա՝ նա գործ է ածուած զանազան արուեստների մէջ, որպէս նիւթ, գլխաւորապէս որպէս զարդ կամ որպէս հարստութեան արտաքին նշան: Անվիճելի ճշմարտութիւնն է, որ ոսկի արդիւնաբերողների արտադրած ամբողջ հարստութիւնը միայն երևութային, խարուսիկ հարստութիւնն է: Ինչքան աւելի շատ մարդ է պարագուած ազգաբնակչութեան միջից՝ ոսկու արդիւնաբերութեամբ, այնքան աւելի քիչ մարդ է մնում իսկական հարստութիւն—այն է՝—կերակուր, բնակարան, վառելիք, ճանապարհներ, մեքենաներ և կեանքի յարմարութեանց, կամֆորտի և խելացի փարթամութեան անթիւ անհամար իրեր արտադրելու համար: Եւ այդ պատճառով, ինչ էլ որ արտաքուստ երևար, այնուամենայնիւ ոսկու արդիւնաբերութիւնը երկիրը աւելի աղքատ է դարձնում և միևնոյն ժամանակ, նոր ասպարէզ բանալով դրամազուլիս տեղաւորելու և սպեկուլացիաներ անելու համար,—նպաստում է միայն երկրի նոյն աղքատութեան մէջ մնալուն և այդպիսով աւելի է տարածում այն սովածութիւնը, չքաւորութիւնն ու յանցանքները, որոնք, որպէս մենք սրանից առաջ տեսանք, մեր դարի վերջերում քանի գնում՝ անընդհատ մեծանում են:

Գետնի մէջ ծածկուած հանքային հարստութիւնների արտահանումը, որից միայն մասնաւոր մարդիկ են հարստանում, իսկ ազգային մեծամասնութիւնը ուղղակի վնասուած է, միմիայն մի մասն է կազմում այն վնասի, որ հասցնում ենք մեր ետնորդներին «հողի կողոպտմամբ»: Անդրադարձային եր-

կիրներում կարելի կը լինէր բազմացնել թանկագին բոյսերի շատ առակաները, այնպէս որ տեղացիների աժան աշխատանքից օգտուելով՝ կարողանան ազարակատերերը կը կարողանային ահապին օգուաններ ստանալ: Բայց այստեղ էլ շատով հարստանալու տենչը յաճախ խորատկում է ազարակատերերի բոլոր յոյսերը: Մշկահոտ ծառեր մի քանի տարի բազմացնում էին Մինդապուրում և Պենանդում, բայց սրովհետեւ մատաղ ծառերը անկում էին բաց տեղերում, կիցիչ արևի տակ, և ոչ թէ ստուերում և մեծահասակ անտառային ծառերի հովանու տակ, ինչպէս նրանք բուսնում են բնական պայմանների մէջ, այդ մշկահոտ ծառերը նինարացան և զազարեցին պտուղ բերելուց: Յետոյ սկսեցին սուրճի ազարակներ շատացնել Յէյլոնում և այլ տեղերում, բայց այստեղ էլ նախ և առաջ ոչնչացրին կուսական անտառները և այսպիսով բոլորովին կերպարանափոխեցին բնական պայմանները, այնպէս որ մատաղ ծառերի աճելու թեւանը նպաստելու համար հարկ եղաւ արհեստական պարարտացման գիմելը: Շուտով սուրճի ծառերի վրայ երեացին հիւանդութիւններ, վնասակար ճիճուներ, և վերջիվերջոյ ստիպուեցին ձեռք վերցնել սուրճի ազարակներից և փոխարէնը անկել թէյի ծառեր, որոնք այժմ ահապին տարածութիւն են բուսում Յէյլոնում և Հնդկաստանում: Բայց սարերի լանջերին անտառների ոչնչացումը սուրճի ազարակներ բազմացնելու համար՝ պատճառել է երկրին յարատեւ և շատ նշանաւոր վնաս: Հազարաւոր տարիների ընթացքում ժայռերի զանդազ քայքայումից առաջացած և անտառային ծառի փտումից սեւահող դարձած գետինը զրկուել է խիտ բուսական ծածկից և արագ սրբուել է անդրազարծային անձրևներից, և այժմ մնացել են միայն մերկ ժայռեր ու անպայման անպտուղ կաւ: Գետինն նախկին արգաւանդութիւնը վերազարձակելու համար հարկաւոր կը լինեն հարելքաւոր, դուցէ և հազարաւոր տարիներ: Այն աւերմունքները, որ մի ժամանակ անում էին հին և միջին դարերի բռնակալները աշխարհակալական նպատակներով կամ վրէժխնդրութիւնից զբոլուած, կրկնուում են մեր օրերում հարստութիւնների անյագ տենչից: Ներկայումս վերանորոգուել է նոյնպէս աշխարհակալական ոգին և նոր երկիրներ գրաւելու փափագը, որ այնքան յատուկ էր հին քաղաքակրթութիւններին, երբ պատերազմներ էին սկսում գերիներ ձեռք բերելու, նուաճուածների վրայ հարկեր դնելու և ահագին կալուածքներ յափշտակելու համար, որպէսզի կառավարող դասակարգը կարողանայ ապրել անսպառ փարթամութեան մէջ: Մեծ եւրոպական պետութիւնները անընդհատ կռիւներ են մղում միմեանց դէմ, աշխա-

տելով իրար մէջ բաժանել ամբողջ Աֆրիկան, որպէսզի գործելու ասպարէզ բաց անեն իրանց ազգաբնակութեան ամենաեռանդուն մասի համար և ընդարձակեն իրանց առևտուրը: Սրանից առաջ է գալիս այն, որ ահազին քանակութեամբ ոգելից խմիչքներ և վառօդ է վաճառուում, շատ արիւն է թափուում—որովհետև տեղացիները ինչպէս կարող են՝ պաշտպանում են իրանց հողերն ու ստացուածքը—թէ սև (ընիկ) և թէ սպիտակ (եկուր) ազգաբնակութիւնները սաստիկ անբարոյականանում են, և վերջապէս՝ նուաճուած տեղական ցեղերը դառնում են նոր տեսակի ստրուկներ: Համեմատելով անգլիացիների վարմունքը իսպանացիների վարմունքի հետ, Վեստ-Ինդիայում, Մեքսիկայում և Պերուում և ինկատի առնելով երկու ցեղերի բնաւորութիւնների և հասարակական կարծիքների մէջ եղած տարբերութիւնը, դժուար է ասել, որն է նրանցից աւելի վատ: Թէ սրանց և թէ նրանց պատերազմների նպատակն էր հարստանալ, հողեր գրաւել և ուզածի պէս օգտուել տեղացիների հարստութիւններից, և թէ և իսպանացիք իբնէ անգլիացիներից աւելի դաժան էին և աւելի խտրութիւն չէին դնում միջոցների մէջ, սակայն հետևանքները թէ այստեղ և թէ այնտեղ միևնոյն էին: Երկու դէպքերումն էլ յաղթողները նուաճում էին երկիրը, գրաւում և կառավարում էին նրան առանց որևէ բանից քաշուելու, նուաճուողների օգուտը աչքի առաջ չ'ունենալով և ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով յաղթուածների զգացմունքների կամ նիւթական բարօրութեան վրայ: Եթէ իսպանացիք ոչնչացնում էին տեղացիներին Վեստ-Ինդիայում, մենք նոյնն էինք անում Տասամիայում և գրեթէ նոյնը խաղաղ Աւստրալիայում: Բայց ապագայ պատմագիրը մատնացոյց կ'անի երկու կէտ, որոնց մէջ իսպանացիք մեզանից բարձր էին կանգնած: Նախևառաջ՝ նրանք հաւատում էին, որ ճշմարիտ ծառայում են Աստծուն՝ տեղացիներին քրիստոնեայ դարձնելով նոյնիսկ զէնքի օգնութեամբ, և այս մի անկեղծ հաւատ էր, որով ներշնչուած էին թէ հոգևորականները և թէ նուաճողները և ոչ թէ մի արտաքին երեսպաշտութիւն, ինչպէս մերն է, քանի որ մենք մեր գործերը միայն քօղարկում ենք «քաղաքակրթութեան բարիքներ» մտցնելու ցանկութիւնով: Միև կողմից ինչ են մեր նուաճումները համեմատած Կորտեցի և նրա հինգհարիւր իսպանացիների նուաճումների հետ. չէ՞ որ նրանք՝ չ'ունենալով պաշար, արագ շոգենաւային հաղորդակցութիւն, որևէ կողմնակի օգնութիւն, իրանց անկատար զէնքերով և պատերազմական պիտոյքներով, որ իրանց մէջքերի վրայ էին կրում, նուաճեցին երկու ընդարձակ քա-

զարտերթուած և բազմամարդ կայսրութիւններ: Շատ կարելի է, որ Մերսիկայի և Պերուի նուաճումը խաղանայիների ձեռքով և Հարաւային-Աֆրիկայի մեր նուաճումը վերջիվերջոյ որոշ չափով առաջագլխական քայլեր են և մտակցում են ամբողջ մարդկութիւնը ճշմարիտ քաղաքակրթութեանն և ապագոյ երջանկութեանը: Բայց եթէ այդպէս էլ է, մենք եղել ենք և այսօր էլ մնում ենք միայն անպիտակից գործօճներ այդ մեծ, որպէս բանաստեղծն է ստում, ճեւատուր, ստատուածային իրողութեան, որին ձգտում է ամենը, ինչ որ կեանք է վայելում: Երբէք մենք զիտակցորէն չենք զիմել այդ ապագային: Մեր նըպատակները մեծ մասամբ եղել են շահագլխական, կատէր, և եթէ վերջիվերջոյ ամեն ինչ լաւ կը կարգաւորուի,—մի բան որ հազիւ թէ կատակածելի է,—մեր զերը այդ գործում այնուամենայնիւ միշտ արժանի կը լինի ամենախիստ գատապարտութեան:

Անգլիացիների վերաբերմունքը գէշի նուաճուած ազգերը մի տարօրինակ խոստուրդ է ներկայացնում բարի և չարի, աջողութիւնների և սխալների, և այս երեւոյթը, իմ կարծիքով, առաջ է գալիս նրանից, որ նոյնիսկ անկեղծ ցանկանալով բարի գործել և արդարութեամբ կառավարել, մեր կառավարութիւնը, ենթարկուելով ազգեցիկ շրջաններին, գրեթէ միշտ հարկադրուած է լինում արդիւնաւոր պաշտօններ ստեղծել մեր ազնաւականութեան ոչ հարուստ անդամների համար և ապրանքներ վաճառելու նոր շուկաներ գտնել մեր գործարանատէրերի և առևտրականների ազգեցիկ գտաի համար: Այստեղից են առաջ գալիս այն սարսափելի հարկերը, որոնց տակ հեծում է Հնդկաստանի տեղական ազգաբնակչութիւնը. այստեղից է՝ օփիոնի մենավաճառութիւնը և աղի հարկը, այստեղից է՝ մեր շարունակ հրաժարուելը այն խոստումների կատարելուց, որ անգլիացիներս սուսել ենք հնդկական կայսրութիւնը հիմնելիս,—մենք խոստանում էինք տեղացիներին հետզհետէ աւելի և աւելի մեծ բաժին յատկացնել իրանց երկրի կառավարութեան գործի մէջ և կառավարել Հնդկաստանը՝ բացառապէս աչքի առաջ ունենալով տեղացիների շահերը:

Վերոյիշեալ գասակարգերի թիւազրութեամբ մեր կառավարութիւնը շարունակ կոխներ է մղում սահմանակից երկիրներում և աւելի ու աւելի ընդարձակում է կայսրութեան սահմանները, նոր և նոր ծանրութիւններ բարձելով անգլիական ժողովրդի ուսերին: Բայց մեր մեծագոյն սխալները պիտի համարենք այն, որ հարկերի ենք ենթարկել շոնետը և մանր հողատէրերին և հարկերը պահանջում ենք վճարել փողով ու ու-

բոշ ժամանակամիջոցներում, այնուհետև՝ որ Հնդկաստանում մտցրել ենք և խստութեամբ գործադրում ենք հողատիրութեան վերաբերեալ մեր օրէնքները, այն է՝ փոխառութիւնների, գրաւների, պարտքի վճարման ժամանակների մեր օրէնքները, որոնք բոլորովին չեն համապատասխանում ժողովրդի սովորութիւններին և պայմաններին և միայն չափազանց նեղում են ժողովրդին, նպաստելով բազմաթիւ փոքրիկ կալուածների անցնելուն մանր սեփականատէրերի ձեռքից՝ կեղեքիչ վաշխառուների ձեռքը: Այսպիսի հանգամանքների մէջ գիւղացիներն աւելի և աւելի աղքատանում են, նրանցից հազարաւորները դադարում են սեփականատէր լինելուց և դառնում են իրանց ազարակների կապալառուներ, անթիւ անհամարները նրանցից ընկնում են ցեց-վաշխառուների սուր ճանկերը և քարշ են դալիս զարհուրելի չքաւորութեան մէջ: Այս զանազան պատճառների շնորհիւ պարբերական սովերը իսկ-որ սարսափելի ծաւալ են ստանում և նախատինք են մեր կառավարութեան համար *): Հնդկաստանի ժողովուրդը շխատասէր, համբերող և չափազանց խնայող է. հողն ու կլիման այնտեղ այնպէս են, որ առատ հունձ, հետեւապէս՝ առատ սնունդ ապահովելու համար հարկաւոր է միայն, որ բաւականաչափ ջուր լինի արտերը ոռոգելու համար և հողագործը վստահութիւն ունենայ, թէ հողը հաստատ իրան է պատկանում: Դրամատէրերի և առևտրականների սիրտը շահելու համար կառուցել ենք այնտեղ բազմաթիւ մեծագին երկաթուղիներ, շոյալել ենք այդ երկաթուղիների և սահմանազախի կռիւների վրայ մի այնպիսի խոշոր գումար, որը բոլորովին բաւական էր ամեն տեղ՝ ուր հարկն էր՝ առուներ անցկացնելու և այդպիսով աղաքնակութիւնը պարբերական սովից փրկ-

*) Այս բոլոր փաստերը, որպէս և Հնդկաստանի տմբողջ *ազգաբնակչութեան երեք շորբորդականը կազմող հողագործների—ուսչիների անզուլթ և անսորոմ կեղեքումը, որ առաջ է եկել նրանից, որ հողային հատկը ամեն տեղ վեր է ածուկ անխիղճ կերպով հաւաքումը դրամական տուրքի (այդ տուրքը նոյնչափ չափազանց մեծ է և դժուար վճարելի, որչափ անչափ մեծ է Իրան-գիտայի և Լեւանային Չոտլանդիայի խոշոր կալուածատէրերի պահանջած տուրքը)—այս բոլոր փաստերը, ստում ենք, վաղուց արդէն յայտնի են, և Հնդկաստանի հմուտ կառավարիչներից շատերը բազմիցս մտատնացոյց են արել, որ գրանք են բոլոր հնդկական (և էլ բոլոր իրանգական) սովերի հիմնական պատճառները: Նորերս այս փաստերը նորից նկարագրել է զարմանալի պարզութեամբ սէր Վելլիամ Վեդդերբերնը, որը իրրեւ զաւարական դատարո՛ր՝ մօտիկից ծանօթ է Հնդկաստանի դրութեանը, իր մասնաւորութեան հետազօտութիւնների նիւթ է գարձրել այդ դրութիւնը և այս հարցի մէջ համարում է ամենաառաջնակարգ հեղինակութիւններից մէկը:

կելու համար Այս փաստը մի այնպիսի յանցանք է կասալաբութեան կողմից, որ կարող է մի՞նեցնել նրա բոլոր բարերաբութիւնները:

Լաւ կասալարութեան անփիճելի և անպայման նշանը ոչ թէ կայսրութեան սահմանների ընդարձակուելն է, կամ պետական արգիւնքների շտտանալն է, կամ ասետրի զարգանալն է, այլ միմիայն ամբողջ ազգայնականութեան բարօրութիւնն ու գոհութիւնը: Մէկ փորձեցէք այս չափով չափել կասալարութեան մեր եղանակը, և հազիւ թէ արժանի լինենք լաւ կասալարիչներ կոչուելու: Հնդկաստանում—անպարտ աղտտաբութիւններ կամ խտովութիւններ, պարբերական սով և ժանտախա. տանք, Իրլանդիայում,—գժգոհութիւն, մշտական չքաւարութիւն ու աղքատութիւն, նոյն աւելի կամ պակաս խիստ սովածութիւնն ու ազգայնականութեան նուազումը—այս ամենը իհարկէ պիտի դասուի տասնեկններորդ դարի ամենատակալի թերութիւնների շարքը:

«Լսեցէք ուրեմն դուք, սենատորներ. լսեցէք այս բարձրագոյն ճշմարտութիւնը. ով որ թոյլ է տալիս հալածանք և ճնշում, ինքն էլ մեղսակից է»:

Վերջնական եզրակացութիւններ

Այժմ կարող ենք տասնեկններորդ դարի առաջագիմութեան և ետադիմութեան ընդհանուր գումարը հանել և որոշ չափով հաշիւ տալ մեզ, թէ ինչ դատաւիճիւն կը կարգայ մեր գլխին ապագան: Տեսանք, որ այս հարիւրամիակը աչքի է ընկնում բացառիկ և բոլորովին չը լսուած առաջագիմութեամբ՝ տիեզերքի և նրա մէջ գործող բարդ ոյժերի գիտութիւնների մէջ: Տեսանք նոյնպէս, որ այս դարը աչքի է ընկնում այդ գիտութիւնների գործադրութեամբ բազմաթիւ նպատակներով, գործադրութեամբ, որը, համապատասխան կերպով ուղղուած լինելով, պիտի կարողանար գոհացընել ամեն մարդու բոլոր պէտքերը, մտցնել ամեն մարդու կեանքի մէջ յարմարութիւն, ուրախութիւն և վեհագոյն հոգեկան զարգացում և սաստիկ բարձրացնել մարդկային բարօրութեան ընդհանուր մակերևոյթը: Մարդկային գիտութեան սահմանները այն աստիճան լայնացել են, որ մեր առջև բոլորովին նոր հորիզոններ են բացուում նոյնպիսի շրջաններում, ուր՝ թըւում էր՝ թէ երբէք չի կարողանալ թափանցել մարդկային խելքը, և քանի աւելի ենք սովորում, այնքան աւելի ենք ընդունակ դառնում ըմբռնելու տիեզերքի շարու-

նակ ընդարձակուող տարածութիւնը: Գիտութեան մարդկանց մասին իրաւամբ կարելի է ասել, որ այժմ նրանք աստուածներ են դարձել՝ բարին ու չարը ճանաչող, որովհետև նրանք ոչ միայն կարողանում են ծառայեցնել ընտելեան խորհրդաւոր ոյժերը մարդկութեան օգտին, այլև շատ անգամ կարողանում են բանալ՝ մարդկութիւնը մաշող բազմաթիւ չարիքների բուն աղբիւրները, կարողանում են ոչնչացնել ցաւը, երկարացնել կեանքը և անհուն կերպով մեծացնել մարդկային ցեղի ֆիզիկական և հոգեկան վայելքները:

Բայց քանի աւելի է գիտութիւնը բաց անում մեր աչքի առջև մարդկութեան անհուն երջանկութեան հնարաւորութիւնը, այնքան աւելի ստիպուած ենք լինում խոստովանուելու, որ լիովին անընդունակ ենք եղել խելացի կերպով օգտուելու գիտութեան տուած միջոցներից: Ձեռքի տակ ունենալով ամեն ինչ, որպէսզի առանց բացառութեան ըոյր մարդկանց մատակարարենք ամեն անհրաժեշտ պիտոյք, յարմարութիւն և նոյնիսկ փարթամութիւն և միաժամանակ տանք լիակատար հանգիստ ու ժամանակ մտաւոր և գեղարուեստական զուարճութիւններ վայելելու համար, մենք ընդհակառակը՝ այնպէս անաստուած կերպով աղջատել ենք մեր ընկերական, հասարակական տրեստութիւնը, որ տուել ենք բոլորովին աւելորդ, ուստի և կորստարէր մեղկութիւն ու փարթամութիւն միայն շատ քչերին, մինչդեռ միլիոնաւոր մարդիկ ստիպուած են ամբողջ կեանքում չարչարուել, տանջուել՝ սոսկ առողջ կեանքի համար անհրաժեշտ պիտոյքների պակասութիւնից: Եւ փոխարէն գիտնական մարդկանց հօր ջանքերը այդ չարիքների դէմ ուղղելու, տեսնում ենք, ինչպէս ամհնաառաջադէմ ազգերի կառավարութիւնները զբաճաւորում են իրանց ժողովուրդները ոտից մինչև գլուխ և ազգային հարստութեան ահազին մասն ու բոլոր գիտնական կարողութիւնները վատնում են մարդկային կեանքը, սեփականութիւնը ու երջանկութիւնը կործանող միջոցների պատրաստութեան վրայ:

Առողջութեան աղբիւրները լիակատար գիտենալով հանդերձ, մենք թոյլ ենք տալիս և նոյնիսկ հարկադրում ենք մեր ազգաբնակիչութեան մեծամասնութեանը ապրել և աշխատել այնպիսի պայմանների մէջ, որոնք խիստ կրճատում են կեանքը, և բացի այդ՝ տեսնում ենք, որ մեր երեխաներից 50,000-ից մինչև 100,000 հոգի մահի են մատնուած մեր դատապարտելի և յանցաւոր անփութութեան շնորհիւ:

Հարստանալու ետևից վայրագ կերպով ընկած՝ մենք ոսկին մարդկային կեանքից թանկ ենք համարում, շատերի հա-

մար կեանքը այն աստիճան ծանր ենք գործնում, որ խնդրապանութիւնը, խեղադարութիւնը և յանցանքները օրէցօր աւելի ու աւելի շատանում են: Չը նայելով որ ունենք աշխատանքը ինչպէս մերկաններ, որ մեր կամքին ենք ենթարկել բնութեան սյժերը, գոյս իրան կրին այժմ աւելի ևս կատաղի է դարձել, քան ի՞նչ կրքէ առաջ, և տարեցատարի մեր ժողովրդի աւելի ու աւելի մեծ մասն է իջնում ազբասների գերեզմանները:

Երբ ապագայ դարերի լոյսը կը ցրի մեր նիւթական առաջադիմութեան հրապոյցները, պատմութիւնը անկասկած կ'առի, որ մեր գեկազարտ շրջանների բարոյական մտերեւոյթի սղորմելիի չափ ստնր էր, և որ մենք անարժան էին տիրելու այն մեծ և բարերար սյժերին, որ մեր ձեռքն է գրել գիտութիւնը:

Ի՛նչ ի՞նչ անցնող դարը այդքան բազմաթիւ օրինակներ է տուել մեր ապիկարութեան, նա այնուամենայնիւ տուել է մեզ նաև լուսադոյն ապագայի յոյս: Ըշմարիտ մարդասիրութիւնը, ժամանակակից հասարակական չարիքը ոչնչացնելու հաստատ ցանկութիւնը, հաստատ հաժողմունքը, ի՞նչ այդ չարիքը Նևարաւոր է ոչնչացնել և, վերջապէս, անխախտ հասարդ գէպի մարդկային բնութիւնը— այս ամենը կրքէ, չէ զգացուել այնպէս ազգու, այնպէս վառ կերպով և չէ աճել այնպէս արագ, որպէս ներկայումս: Դէպի սոցիալիզմն ընթացող շարժումը, որ նկատուում է վերջին տասը տարիների ընթացքում Եւրոպայի և Ամերիկայի բոլոր գլխաւոր երկիրներում, այս բանի ամենալուսադաջոյցն է: Այս շարժումը գրաւում է որպէս միջին դասակարգի բարձր և աւելի զարգացած մասի մէջ, ոչնչացէ և քանաւորների շարքերում երիտասարդ սերնդի միտքը: Ժողովուրդը սկսում է հասկանալ հասարակական շարիքների բուն պատճառները, որոնք այժմ միաստու են բոլոր դասակարգերին միատեսակ՝ օրհնութեան փոխարէն անէժք դարձնելով գիտութեան պարզկենտրից շատերը: Եթէ այլևս մի քառորդ դար տեի այս կրթիչ ընթացքը, յաջորդ սերունդը միտժամանակ և՛ ոյժ, և՛ գիտութիւն կ'ունենայ անհրաժեշտ բարենորոգութիւններին ձեռնամուխ լինելու համար:

Այժմ ընկած ենք բարենպաստ հոսանքի մէջ: Ունենք մեծ բանաստեղծներ, մեծ գրողներ, մեծ մտածողներ, որոնք սովորեցընում և առաջնորդում են մեզ. ունենք օրէցօր ստուարացող խումբ նախանձախնդիր աշխատաւորների, որոնք սովորունութեամբ լոյս են տարածում և լաւագոյն օրերի մօտենալուն են անձնագոհ ծառայում: Եւ եթէ Ներկայ Դարը ականատես է եղել՝ մարդկային պատմութեան մէջ բոլորովին չը տեսնուած նիւ-

թական և մտաւոր առաջադիմութեանը, ապագայ դարը լիովին քաղկու է այդ առաջադիմութեան հասունացած պտուղները, բարձրացնելով մարդկային բարոյական և հասարակական կեանքը նոյնչափ նոր, նոյնչափ մեծ և նոյնչափ առաջ չը լսուած բարձրութեան վրայ: Ապագայի այդ առաջադիմութեան մասին է, որ մարդարէսնում է Լիւիս Մորրիսը իր մի կրակոտ ոտանաւորի մէջ, որով և յարմար եմ դատում վերջացնել իմ աշխատութիւնը.

Կը գայ օրը, երբ այս կըուի, հեծեծանքի ժըխորից Բարձր ու ազատ եղբայրութիւն կը բարձրանայ փառաւոր. երբ կը ջընջուեն նեղ, եսական ձըգտումները սըրտերից, Ու կը լինի մի նպատակ—երջանկութիւնն ընդհանուր: Կը գայ օրը, երբ աշխարհքում, ինչպէս Յիսուս ցանկացաւ, Մարդը կըլինի մարդու համար քընքոյշ եղբայր սրտացաւ:

Կըգայ օրը, եղբայրութիւնն երբ կը լինի զօրաւոր, Քան թէ փոքրիկ այս կապերը, որ աշխարհքն են բաժանում. երբ կըլըռեն թնդանօթներն ու փողերը մեծագոռ, Կ'իջնի դրօշն ու կը մընայ սուրը իրեն պատեանում. երբ որ կը'նկնեն պատնէշները լեզուների, կըրօնի, Ու կըձուլուեն մարդիկ իրար—մի մարդկութիւն կը լինի:

Վ Ե Ր Ջ

